ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 27 » մարտ 2025թ. № 1847 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 7573-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 1432-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/1401-25 առ 25.03.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 7573-Ա հրամանի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Ռոզամետ նրբաքսուք արտաքին կիրառման (N 20231), Ալոտենդին դեղահատեր 5մգ+5մգ (N 22543), Ալոտենդին դեղահատեր 5մգ+10մգ (N 22544), Ալոտենդին դեղահատեր 10մգ+5մգ (N 22545), Ալոտենդին դեղահատեր 10մգ+10մգ (N 22546), Ատորիս դեղահատեր թաղանթապատ 40մգ (N 19341/1), Պրոնորան դեղահատեր երկարատև ձերբազատմամբ (N 19813), Զոլոֆտ դեղահատեր թաղանթապատ (N 22056), Ռիգևիդոն դեղահատեր թաղանթապատ (N 19226) և Էկվատոր դեղահատեր 10մգ+5մգ N (19217) դեղերի գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:»:

2. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 1432-Ա հրամանի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Աեվիտ դեղապատիճներ (N 21301), Սուպրաստին դեղահատեր (N 19340), Ատորիս դեղահատեր թաղանթապատ 10մգ (N 19725), Ատորիս դեղահատեր թաղանթապատ 20մգ (N 19726), Տերբիզիլ դեղահատեր (N 19853), Սպիտոմին դեղահատեր 5մգ (N 19523), Սպիտոմին դեղահատեր 10մգ (N 19524), Բետադին մոմիկներ հեշտոցային (N 21355), Սեպտանազալ ցողաշիթ քթի 0,5մգ/մլ+50մգ/մլ (N 19573/1/1), Սեպտանազալ ցողաշիթ 1մգ/մլ+50մգ/մլ (N 19574/1/1), Էկվատոր դեղահատեր 20մգ+10մգ (N 19174) և Էսկապել դեղահատեր (N 19065) դեղերի գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:»:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Ն. Ռոմանովային՝ սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, առողջապահության նախարարության հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157